ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԽԱՉԱՏՈՒՐ ԱՆԴՐԵԱՍՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ԼԻՃՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Սիրելի՛ լիճքեցիներ,

Օգոստոսի 15-ը մեր համայնքի համար այսուհետև կունենա յուրահատուկ խորհուրդ. ըստ Մեղրի համայնքի ավագանու թիվ 102-Լ որոշման՝ առաջին անգամ նշվում է Մեղրի համայնքի Լիճք բնակավայրի օրը: Հիշարժան պահ է՝ լեռներին թիկնած բարձրադիր բնակավայրի մերօրյա կյանքում նոր ու գեղեցիկ ավանդույթի մեկնարկ:

Առատորեն օրհնված Լիճքը տեղակայված է Սյունյաց բարձր լեռնաշխարհում՝ ծովի մակերևույթից շուրջ 1780 մ բարձրության վրա: Դարավոր հարևանն է հնամենի Տաշտունի, աչքի է ընկնում իր չնաշխարհիկ բնաշխարհով, սառը և ջրառատ աղբյուրներով, լեռնային արագահոս գետակներով ու առվակներով:

Հարուստ է պատմամշակութային հուշարձաններով, որոնք նրա բազմամյա պատմության լուռ վկաներից են: Դրանցից են 17-րդ դարի քարաշեն կամուրջը, գյուղի կենտրոնի հին գերեզմանատեղին, 1941-1945 թվականների Հայրենական մեծ պատերազմում հերոսացած լիճքեցիների հուշարձանը, որը երախտապարտ համագյուղացները կառուցել են հեռավոր 1967 թվականին:

Լիճքից ներքև է երբեմնի Զվարի բնակավայրը, որտեղով հոսում է Մեղրի գետի ամենամեծ Զվարի վտակը: Այստեղ է գտնվում 10-րդ դարի Զվարավանքը, որը վերակառուցվել է 17-րդ դարում: Լիճքի կենտրոնում է գտնվում Սուրբ Կարապետ (հիշատակվում է նաև Սուրբ Գևորգ) 1658 թվականին կառուցված եկեղեցին:

Լիճքը Մեղրի համայնքի այն բնակավայրերից է, որը տարիներ շարունակ աչքի է ընկել իր աշխատասեր, միակամ և հայրենասեր բնակչությամբ: Նրանց ջանքերով և նվիրումով պահպանվել է ոչ միայն գյուղի դիմագիծը, այլև նրա հոգևոր և մշակութային շունչը:

Շնորհակալությունս եմ հայտնում Լիճք բնակավայրի վարչական ղեկավար Հայկ Հովհաննիսյանին՝ նվիրվածության և բնակավայրի զարգացման գործում ունեցած ավանդի համար, այն երախտավոր բնակիչներին, ովքեր իրենց ներդրումն են ունեցել Լիճքի զարգացման ընթացքում և շարունակում են ապրեցնել, շենացնել հայրենի գյուղը:

Սիրելի բարեկամներ,

Մաղթում եմ, որ ձեր ընտանիքներում տիրի խաղաղություն, առողջություն, բարեկեցություն ու սեր:

Թող Լիճքի օրվա այս անդրանիկ տոնակատարությունը դառնա մնայուն ավանդույթ և ամրապնդի մեր համախմբվածությունն ու փոխվստահությունը:

Շնորհավոր տոնդ, սիրելի՛ Լիճք: